ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-1

ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ-ի կարիքների համար ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ-ի կարիքների համար ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) ծառայությունների գնման գործընթացի նպատակով պատասխանատու ստորաբաժանման՝ որը համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 33-րդ կետի իրականացնում է գնահատող հանձնաժողովի լիազորությունները, նիստը տեղի ունեցավ 16.01.2017թ. ժամը 10-00-ին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Է.Ավագյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Է.Ավագյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում եմ, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեմ շահերի բախում:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ.Ղազարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /12.01.2017թ. թիվ-1/18-2/475-17 գրությամբ/ հրավեր էր ուղարկվել՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ին (ք.Երևան. Հյուսիսային պողոտա 1)

-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգին 13.01.2017թ. դրությամբ հայտ է ներկայացրել «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն.

-մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ-ի կարիքների համար ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) ծառայություններ	-	10 395 000

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում (գնահատման թերթիկը կցվում է) հանձնաժողովը որոշեց՝

-«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի ներկայացրած հայտը գնահատել որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ.

-Ներկայացված հայտի հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց՝

«Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից (առաջին տեղն զբաղեցրած մասնակից) և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու համար:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է.Ավագյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան